Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-077-28.10.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում

1. 6.1-ին մասում «գործունեություն» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ սույն հոդվածի 6.2-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերը,

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.2-րդ, 6.3-րդ եւ 6.4-րդ մասեր.

«6.2. Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության անդամ երկրների, ինչպես նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Հարավային Կորեայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Արաբական Միացյալ էմիրությունների, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետությունում համապատասխան լիցենզավորող մարմնի թույլտվությամբ կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող լիցենզավորման ենթակա գործունեություն (բացառությամբ՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 1-ին կետի 8-րդ, 9-րդ, 10-րդ ենթակետերով, 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով, 6-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ ենթակետերով, 8-րդ կետի 5-րդ ենթակետով, 15-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերի) տվյալ պետության օրենսդրությամբ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

6.3. Սույն հոդվածի 6.2-րդ մասով նախատեսված թույլտվությունը մերժվում է սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4.1-ին, 5-րդ կետերով սահմանված հիմքերով:

6.4. Օրենքով նախատեսված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 6.2 մասով սահմանված երկրների իրավաբանական անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար թույլտվության տրման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-077-28.10.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում

1. 6.1-ին մասում «գործունեություն» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ սույն հոդվածի 6.2-րդ մասով նախատեսված դեպքերի)» բառերը,

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.2-րդ, 6.3-րդ եւ 6.4-րդ մասեր~~ով~~.

«6.2. Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության անդամ երկրների, ինչպես նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Հարավային Կորեայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետությունում համապատասխան լիցենզավորող մարմնի ~~որոշմամբ~~ թույլտվությամբ կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող լիցենզավորման ենթակա գործունեություն (բացառությամբ՝ սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 1-ին կետի 8-րդ, 9-րդ, 10-րդ ենթակետերով, 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով, 6-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ ենթակետերով, 8-րդ կետի 5-րդ ենթակետով, 15-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերի) տվյալ պետության~~ կողմից տրված համապատասխան թույլտվության առկայության դեպքում:~~ օրենսդրությամբ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

6.3. Սույն հոդվածի 6.2-րդ մասով նախատեսված թույլտվությունը մերժվում է սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4.1-ին, 5-րդ ~~մասերով~~ կետերով սահմանված հիմքերով:

6.4. Օրենքով նախատեսված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող՝ սույն ~~Օ~~օրենքի 7-րդ հոդվածի 6.2 մասով սահմանված երկրների իրավաբանական անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար թույլտվության տրման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 3. ~~Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում մշակել եւ հաստատել սույն օրենքի 6.4-րդ կետով սահմանված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6.2 մասով սահմանված երկրների իրավաբանական անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար թույլտվության տրման կարգը~~ Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-077-28.10.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը (…)»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
			2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «մասերով» բառն առաջարկում ենք փոխարինել «մասեր» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
			3. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 6.2-րդ մասում նշված «Միացյալ Թագավորության» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
			4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 6.2-րդ մասում նշված «որոշմամբ» բառն առաջարկում ենք փոխարինել «թույլտվությամբ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
			5. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 6.2-րդ մասում «կողմից տրված համապատասխան թույլտվության առկայության դեպքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենսդրությամբ համապատասխան	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում» բառերով: 6. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 6.3-րդ մասում «մասերով» բառն առաջարկում ենք փոխարինել «կետերով» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կարգավորումները, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: 7. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 6.4-րդ մասում «Օրենքի» բառն առաջարկում ենք փոխարինել «սույն օրենքի» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	1. Նախագծի 3-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում մշակել և հաստատել սույն օրենքի 6. 4-րդ կետով սահմանված գործունեության իրականացման վայրի պահանջ չնախատեսող՝ Օրենքի 7-րդ հոդվածի 6. 2-րդ մասով սահմանված երկրների իրավաբանական անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար թույլտվության տրման կարգը» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է